Կ Ա Ր Ծ Ի Ք

Միքայել Արմենի Նավասարդյանի «ՀՆԱ արտադրության արդյունավետության գնահատումը տնտեսական աճի որակի բարելավման համատեքստում (ՀՀ նյութերով)» թեմայով ատենախոսության սեղմագրի վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

<u>Թեմայի արդիականությունը</u>

Մ. Ա. Նավասարդյանի աշխատությունը նվիրված է ՀՆԱ տնտեսական արդյունավետության և աճի որակի գնահատմանն ու վերլուծությանը: Տնտեսական աճի որակի վերաբերյալ ժամանակակից ուսումնասիրություններն արդեն առավելապես ուղղված են ոչ թե պարզապես աճի քանակական մեծության գնահատմանը և դրա շարժընթացի վերլուծությանը, այլ բուն տնտեսական աճի՝ տարբեր փուլերում դրսևորվող որակական բնութագրիչների գնահատմանը, ինչպիսիք են օրինակ՝ բարեկեցությունը, աճի արդյունավետությունը, ներառականությունը կամ դրա բնապահպանական հետևանքները: Այսպես, աճի նորովի մեկնաբանումը և գնահատումը, մասնավորապես՝ որակի համատեքստում, թույլ է տալիս տնտեսական զարգացման քաղաքականության շրջանակներն ավելի ընդլայնել և այն ուղղել հասարակության կյանքի որակի և երկրի մրցունակության բարելավմանը:

Որակյալ տնտեսական աճ ապահովելու քաղաքականության հիմնաքարային ուղղություններից մեկը վերաբերում է տնտեսական արդյունավետությանը, քանզի ժամանակակից տնտեսություններում գործնականորեն տնտեսական աճին ամենամեծ նպաստում ունեցող գործոնը հենց արդյունավետությունն է: Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տնտեսության՝ արտադրական գործոնների տեսանկյունից ցածր ներուժը՝ երկրի՝ ՀՆԱ արտադրության արդյունավետության գնահատումն ու բարելավումը կարող են մեծապես նպաստել երկրի տնտեսության որակական փոփոխություններին:

Ատենախոսության սեղմագրի հիմնական բովանդակությունը

Ատենախոսության սեղմագրում ձևակերպվել են հետազոտվող թեմայի արդիականությունը, նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը, դրանց փորձարկումը, ատենախոսության հիմնական բովանդակությունը և գիտական հոդվածների ցանկը, որոնք արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները:

Ատենախոսության հիմնական գիտական նորույթը.

Ատենախոսության գիտական նորույթ հանդիսացող հիմնական արդյունքներն են՝

- ✓ Պարամետրային և ոչ պարամետրային մեթոդներով, մասնավորապես՝ համապատասխանաբար Մալմքվիսթի համաթվի և ստոխաստիկ սահմանի մոդելի կիրառմամբ գնահատվել է ՀՀ՝ ՀՆԱ արտադրության արդյունավետությունը:
- ✓ Մալմքվիսթի համաթվի միջոցով դուրս են բերվել ՀՀ ընդհանուր գործոնային արտադրողականության կառուցվածքը բացատրող քանակական գնահատականները:
- ✓ Որոշվել է ՀՀ տնտեսության ճյուղային, ներճյուղային և տարածքային կենտրոնացվածության մակարդակներն ու գնահատվել դրանց փոխառնչությունը երկրի ՀՆԱ ծավալների փոփոխություններին:
- ✓ Մշակվել է տնտեսական արդյունքի որակի համաթվի հաշվարկման մեթոդաբանություն, որի հիման վրա գնահատվել է ՀՀ տնտեսության որակը, դրա դինամիկան, կայունությունը և կառուցվածքը:
- ✓ Մշակվել է տնտեսության որակի սիմուլյացիոն մոդել, որը հնարավորություն է տալիս դիտարկել երկրի տնտեսության որակի փոփոխությունները իմիտացված տարբեր շոկերի պարագայում, ինչպես նաև տնտեսության որակի բարելավման քաղաքականության համար մշակել հասցեական լուծումներ: Տնտեսական արդյունքի որակի մշտադիտարկման համար մշակված համաթվի և մոդելի հիման վրա ստեղծվել է առցանց հարթակ, որտեղ կարելի է նաև իրականացնել համապատասխան սիմուլյացիաները և հետևել համակարգի վարքագծի փոփոխություններին:

Սեղմագրում ամփոփ ներկայացված է ատենախոսության բովանդակությունը: Ատենախոսության առաջին՝ «Տնտեսության արդյունավետության և որակի ուսումնասիրության տեսամեթոդաբանական հարցերն ու գնահատման միջազգային փորձը» գլխում, քննարկվել են տնտեսական արդյունավետության և աճի որակի շրջանակներում մասնագիտական գրականության տեսական, մեթոդաբանական և էմպիրիկ ձեռքբերումները, գնահատվել է ՀՀ արտադրական գործոնների նպատաստումները տնտեսական աճին և արտադրողականության մակարդակները: Ատենախոսության երկրորդ՝ «Տնտեսական արդյունավետության և տնտեսական աճի որակի գնահատումը» գլխում, երկու տարբեր մեթոդներով գնահատվել է ՀՀ ընդհանուր գործոնային արտադրողականությունը, դրա շարժընթացը և կառուցվածքը: Հաջորդիվ ուսումնասիրվել է երկրի տնտեսությունում դրսևորվող կենտրոնացվածության աստիճանը և դրա փոխառնչությունը ՀՆԱ-ի հետ: Երկրորդ գլխի շրջանակներում ներկայացվել է տնտեսության որակի գնահատման նոր քանակական գնահատականի հաշվարկման մեթոդաբանությունը: Հետազոտության երրորդ՝ «ՀՀ տնտեսության որակի վերլուծությունը և դրա բարելավման պլանավորումը» գլխում, մանրազնին ուսումնասիրության է ենթարկվել գնահատված համաթիվը, դրա դինամիկան, կայունությունը և կառուցվածքը Հայաստանի Հանրապետության նյութերով, ընդ որում, ոչ միայն առանձին երկրի ցուցանիշների կտրվածքով, այլև, ըստ հաշվարկված համաթվի, առաջատարների և ամենացածր վարկանիշ գրանցած երկրների, ՀՀ հարևան երկրների, ինչպես նաև շնչի հաշվով ՀՆԱ գրանցած ՀՀ-ին հարակից երկրների շրջանում: Եզրակացություններում ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները, ինչպես նաև կատարվել են առաջարկություններ՝ ուղղված Հայաստանի Հանրապետության տնտեսության արդյունավետության և որակի բարելավմանը:

<u>Եզրակացություն</u>

Ընդհանուր առմամբ, սեղմագիրը գրված է գիտական պատշաճ մակարդակով, հեղինակի հետազոտություններն արդիական են: Սեղմագրում հետազոտության հիմնական արդյունքների ամփոփ նկարագիրը պատկերավոր նկարագրված է աղյուսակների և գծապատկերների միջոցով, իսկ վերջում ներկայացված են

աշխատանքից դուրսբերված հիմնավոր եզրակացություններ և որոշ իրատեսական առաջարկություններ: Աշխատանքի ներածական մասում հեղինակի կողմից առաջադրված խնդիրները համապատասխան լուծում են ստացել:

Ատենախոսության սեղմագիրն իր բովանդակությամբ համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին, ուստի կարելի է արձանագրել, որ Միքայել Արմենի Նավասարդյանի «ՀՆԱ արտադրության արդյունավետության գնահատումը տնտեսական աճի որակի բարելավման համատեքստում (ՀՀ նյութերով)» թեմայով ատենախոսությունն իրենից ներկայացնում է ինքնուրույն և ավարտուն հետազոտություն, իսկ դրա հեղինակն արժանի է Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀՊՏՀ ինֆորմատիկայի և
վիճակագրության ֆակուլտետի դեկան,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ՝ Ա. Գ. Հակոբյան

Ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՊՏՀ գիտական քարտուղար՝ Ն. Հ. Դարբինյան

«18» հուլիսի 2024թ.